

դարձուցանել այս կողմի Հայոց՝ մանաւանդ Հայ երիտասարդութեանը մէջ։ չիք ոք աստ որ ամեն վայրկեան անձկութեամբ տեղեկութեան չսպասէ Տաճկաստանէն, թէ ի՞նչ կանեն այժմ՝ Հայք, ի՞նչ կը գործեն, կ'յաջողին իւրեանց ձեռնարկին մէջ՝ թէ յաւաստ կը լքանին։

Ինչքան ալ առաւել կամ նուազ իրական նշանակութիւն ունենայ Թուրքիոյ Հայոց այժմու ընթացքը, զորմէ այժմ տեղը չէ խօսելու, սա ստոյգ է թէ՛ նա Ռուսահայոց ազգային ըզգայմանց եւ ոգւոյն մի նոր եւ անգուսպ գրգռւ տուած է, յորմէ եւ յառաջ գալ սկսած է սոյն երկու սահմանակից տէրութեանց հպատակող համարիւն եղբարց եւ ազգակցաց մէջ առ իրեարս համակրանաց, սիրոյ եւ սերտ հաղորդակցութեան մի այնպիսի զգացում՝ եւ եռանդ, որ եթէ լաւ արծարծուի եւ առաջնորդուի կարող եւ արժանաւոր ձեռքերու միջոցաւ, Ազգին ապագայ օգտին եւ բարգաւաճմանը համար կարող է այժմէն մեծամեծ եւ փայլուն իրական յոյսեր խոստանալ։ Ազգին ընդհանրութեանը մեծ երախտիք արած պիտի լինի նա՝ որ կարող լինի եւ գիտնայ Ռուսահայոց եւ Թրքահայոց մէջ նոր սկսեալ սոյն բարեկամական եւ սիրալիր հաղորդակցութիւնն եւ յարաբերութիւնն իմաստութեամբ եւ արժանաւորապէս մշակելու։

ՆԻԿՈՂԱՅՈՍ Մ. ԹԻՂԱՆՏԱՆԵԱՆՑ՝

Վ Ա Յ Ր Ե Ն Ի Ն Ե Ր Ի Կ Ր Օ Ն Ը .

Վայրենիներն՝ ի քրիստոնէութիւն դարձնելը գժուարին է այն պատճառով, որ սոցա մէջ կպակասի այն բարոյական զարգացումը, որ առհասարակ մտքերը կպատրաստէ նոր եւ լուսաւոր վարդապետութեան սերմերն ընդունելու։ Ինչպէս կտեսնենք այս բանս պատմութեան մէջ, Այստեան վայրենի ցեղէն (Փիլիպպեան կղզիներում) մի կին կհարցնէր թէ, աստուածութիւնն ի՞նչ կերպով երկինքը կարող է լինել, երբ քարը վեր որ կնեանք՝ կգառնայ նորէն գետին կընկնի : Էսքիմոսներն*) եր-

(*) Էսքիմոսները կընակին երկրագունդիս ամենահիւսիսային եւ ցուրտ կողմերը՝ Գրենլանդեայ, Բաֆինեան արշիպելագոսի ու Ալէուան կղզի-

կար ժամանակ կընդդիմանային քրիստոնեայ քարոզիչներին
ամեն ջանքերին, որոնք Գրենյանդեայում առաջին անգամ
քարոզչութեան տեղի հաստատեցին 1721 ին։ Նոքա նոր վար-
դապետութիւնը կմերժէին ասելով. «ցոյց տուէք մեզ այն
աստուածը, որ կքարոզէք, եւ մեք կհաւատանք ձեզ, եւ նորան
պաշտօն կմատուցանենք. ապա թէ ոչ՝ դուք նորան այնպէս
բարձր եւ անիմանալի կնկարագրէք, որին մեք չենք կարող հա-
սանել։ Նա մեզ հոգալ անգամ չուզեր. քանի քանի անգամ երբ
հիւանդ եւ քաղցած էինք եւ դէպի նա աղաղակեցինք, բայց
նա կարծես մեզ չլսեր։ Ձեր երկինքը, հոգեկան ուրախութիւն-
ները եւ երջանկութիւնը թերեւս ձեր աչքին լաւ կթուին, բայց
մեզ համար ձանձրալի են. մեզ պէտք են ծովահարներ, ձկնորս
եւ թռչուններ, ըստ որում առանց սոցա նոյնչափ վտանգ կայ
մեր հոգիին, որչափ եւ մարմինին։ Աւելի լաւ է մեք ծարնգար-
սուկուռի մօտ երթանք, ուր ամեն բան առատապէս կգտնենք
առանց նեղութեան»։ Մեօհատուգէն, որ հնդիկներին կպաշտ-
պանէ սպիտակների բռնութեան դէմ՝ մի Գելաւորցի հարցուց
թէ՝ ինչո՞ւ դու քրիստոնեաների ոչ մի եկեղեցին չես երթար,
որին նա հեգնաբար պատասխանեց. «Սպիտակների աղօթա-
րաններում չափազանց շատ կխաբեն. կասեն թէ՝ մի գողանար,
իսկ իրենք հնդիկների երկիրները կգողանան կյաւիշտակեն. սի-
րէ ընկերդ — իսկ իրենք չեն ուզեր սեւամորթի հետ իմիասին
աղօթք անել. բացի այս, որչափ եկեղեցիներ կան այստեղ,
կարգապաշտների, հռոմէականների, բողոքականների, եպիս-
կոպոսականների . . . եւ միեւնոյն ժամանակ ամեն մէկ
եկեղեցին կասէ, ճշմարիտը միայն մեք ենք, միւսները կխաբեն,
Բայց հնդիկների եկեղեցին — անտառն եւ անապատը լաւ են.
երկուքն էլ նոյն լեզուն ունին»։ Գալասեան սեւամորթներին
պետր՝ Կրապֆ քարոզիչին կասէր. «Մեք պէտք չունինք քրիս-

տոնի մէջ, եւ բոլորովին անկախ են։ Կեբրաղրուն իւրեանց որսերով, որ
հում հում կուտեն, եւ այս պատճառաւ անունին մնացել է Էսքրիմուս (որ
կնշանակէ հում ձուկ ուտող)։ Նոցա ունեցած միակ կենդանին շունն է,
որ իւրեանց սահակներին կլծեն։ Ազոտտ ժողովուրդ են եւ 1733էն յա-
ռաջ վայրենի կռապաշտներ էին. այժմ քրիստոնեական կրօնը ծանօթ է
մէջերին։

տանեայ լինելու, վառն զի կանանենք որ քրիստոնեաները մեզնէ լաւ չեն: Եւրոպացիները յաճախակի արժանի կլինէին անապատի տգէտ որդիներէն այս խիստ վճիռը լսելու, եւ նոցա վերայ ազդեցութիւնը բոլորովին կորուցին իւրեանց սեպհական ամօթալի գործերով եւ չար օրինակներով: Հատարակածային Ամերիկայի սեւամորթները ըստ Շերքերի, իւրեանց կռապաշտութեան կրօնքին հաւատարիմ են մնացել: Թէպէտեւ անուանաբար 300 տարիէ ի վեր քրիստոնեայ են, մինչեւ զայժմ իւրեանց հեթանոսական կռքերը կպահեն քրիստոնէական տաճարների սեղանների տակ, որոց առջեւ աղօթք կանեն: Ազէքսանդր ֆոն Հումբոլդ քարոզիչների կոյր եռանդի մի ցաւագին օրինակ մէջ կրերէ, որ մինչեւ մարդիկ յափշտակելու կհասնի: Մի քարոզիչ, Գուալիրայի մէջ՝ իւր հնդիկ ցեղը պատերազմի հանեց մերձակայ թշնամի մէկ ուրիշ ցեղի դէմ: Նոքա մի խրճիթում հանդիպեցան մի կնոջ իւր երեք որդիներով, որի այրը ձկնորսութեան էր գնացել: Աինը փախչելու փորձ արաւ, բայց խոտաւէտ անապատում բռնուեցաւ, կողոպտուեցաւ եւ որդիների հետ Ա. Ֆրանչիսկոյ զրկուեցաւ: Քարոզիչները կյուսային, թէ կինը տուն դառնալու ճանապարհը չգտներ, սակայն նա իւր մնացած զուակների մօտին հոգալով՝ մի քանի անգամ փախչելու փորձեր արաւ, բայց ամեն անգամ նորան բռնեցին, պատժեցին եւ վերջապէս որդիներէն անջատելով, Ատսբեցոյ գետի ուղղութեամբ դէպի վեր յուղարկեցին մի ուրիշ քարոզչատուն Ռից-նեգրոյ գետին վերայ: Թշուառուհին մի անգամ յաջակեցաւ իւր պարանները կտրատելու, եւ խոյն նաւակէն ջուրը ցատկելով, լող տալով մինչեւ ձախ եզրը հասաւ, ուր ժայռի մի վերայ թփերի մէջ պահ մտաւ: Նորան կրկին բռնեցին, ձաղկեցին, եւ ձեռքերն ետեւը կապելով յաւիտեան քարոզչատուն յուղարկեցին: Իսկ նա վառուած մի խորհրդով—որդիներն ազատել եւ նոցա հետ հայրենիք դառնալ—այնպիսի քաջագործութիւն արաւ, որ ըստ երեւոյթին անկարելի կթուի: Քարոզչատան մէջ գտնուած հրդեհիկները գերուհին վերայ խղճալով, որի թեւերի վերայ կապերէն՝ վերքեր էին գոյացել պարաններն արձակեցին, եւ նա մնացած կապերը ատամներով կրծելով կտրատեց եւ միւս առաւօտ աներեւոյթ եղաւ: Չորս օրէն ետքը նորան տեսան ար-

դէն Ս. Թրանչիսկոյի մօտ, ուր նորա որդիքը կտառապէին։ Աւրեմն նա անցել էր այս ժամանակ թուախիտ անտառներէ, անձրեւային եղանակների տեսն, առանց վախնալու մութ գիշերներէն եւ եղբրքներէն դուրս բարձրացած գետերէն, որ մի քանի տեղ միակ ճանապարհներն են, — երբեմն լող տալով եւ երբեմն ուղմային խիտ առ խիտ ու հիւսուած բոյսերի մէջէն ճանապարհ հորդելով, որոնք նորա մարմինը կյօշոտէին, եւ կերակրուելով միայն սեւ մրջիւններով. ամենադժուարին տեղափոխութիւններ կատարեց միայն նորա համար որ կրկին երթայ եւ նորէն այն անողորքելի մարգկանց ճիրանն ընկնի, որոնք նորա մայրենի անձնանուիրութիւնը նորանով վարձատրեցին, որ մի ամենահեռու քարոզչատուն յուզարկեցին վերին Օրինոկոյ գետին վերայ, ուր թշուառ մայրը բոլորովին յուսահատուր լինելով վերստին իւր որդիքը տեսնելէ՝ իւր կամքով քաղցածութեամբ մեռաւ։ Հոմբոլդ երբ տեսաւ այն ժայռը, ուր թշուառուհին ապաստան կիսնդրէր, Ատաբացցոյի եղբրքը՝ սիրար ելաւ, նորան այժմ կկոչեն «Մայրական ժայռ»։ «Եթէ այս անապատների մէջ հազիւ մարդի հետք կերեւի, կբացականչէ Հոմբոլդ, — բայց բնութեան անընկճելի այս արձանին — ժայռի անունը, յաւիտենական յիշատակարան կըմնայ մեր ցեղի բարոյապէս ապականուած լինելուն, վայրենիներին բարեպաշտութեան եւ քաղաքակրթեալ ժողովուրդի բարբարոսութեան. . . : Այս ժայռը պէտք է պահէ յիշատակ կեղծաւորեալ բարեպաշտութեան զօհի վերայ, եւ այն չնչին անձերի կոշտութեան վերայ, որ իրենք իրանց կանուանեն սպառաւոր այնպիսի մի կրօնի, որ իւր օրէնքների մէջ աւաջին տեղը կգնէ ընկերին սէրը։ Մնոյ նաւաւարը կհաղորդէ թէ՛ Անգղիացի քարոզիչները Ֆալկլանեան կղզիներում — Հրային երկրի ընկիւններէն — սպտրելով որդիները կըյափշտակեն, որպէս զի նոցա կրթութիւն տան, բայց ինզճմայրերը՝ որ նախ եւ յառաջ ընծանէրով կխաբուէին, ի վերջոյ կղզյային արածներնուն վերայ։ Քիչ ժամանակ յառաջ՝ անգղիական մի նաւի բոլոր մարդիքը նոցա ձեռքով մարթոտուեցան, եւ երբ ռազմանաւեր գնացին այնտեղ, գործը քննելու եւ պատժելու՝ վայրենիները պատասխանեցին, թէ մեք

չենք ուղեր սպիտակներով հետ յարաբերութիւն ունենալ, վասն զի դուք մեր որդիները կգողանաք:

Վայրենի ցեղերի մէջ առհասարակ սովորական ծէսը — մեռեալներն առանձին իմն խնամքով թաղելը, նոցա հետ ոչ միայն կերակուր եւ դէնքեր դնելով, այլ նաեւ մարդկային զոհեր նոցա կնիկներէն կամ ծառաներէն — աղայոյց է, թէ մարդը սրջափ դիւրութեամբ կը մըռնէ ապագայ կեանքի գաղափարը, եւ թէ մահը միայն տեղափոխիչ է գէպի այն: Աւստրալիացիներն իւրեանց ննջեցեալները արեւամուտէն ետքը կ'թաղեն, եւ երբ առաջին աստղը կերեւի, քուրմը կը ացականչէ. «նայեցէք, ահա նա կերթայ հրեղէն ցուպը ձեռքին»: Ընկերութեան կղզիների բնակիչները կհամարեն թէ աստղերը ննջեցեալների հոգիներն են, եւ նոցա իրենց սիրած մարդերի անունով կկոչեն: Վայր ընկնող ասագերը այն հոգիներն են, որ չոր սգիէն հալածուելով, կուգան որ աշխարհիս վերայ՝ փրկութիւն գտնեն: Գելաւարիները Նոսիլէլին կասէին թէ «չընդիկներն յաւիտեանս չեն կարող մեռնել, ըստ որում նոյն իսկ հնդիկի կօրեալը նօրէն կծլի եւ կըսանի»: Վերոյշեալ ամեն ցեղերը միեւնոյն բառը կգործածեն «հոգի» եւ «սոսուր», բառերի համար, որով կերեւի թէ՛ որ աստիճանի խորին գաղափար ունին:

Բայց միեւնոյն վայրենիները, որ կորածան մտքերին մէջ այն բաները, ինչոր աշխարհայինէն վեր են, չեն կարող ըմբռնել թէ՛ որչափ նուաստութիւն է իրենց համար, որով կ'իտնարհին իւրեանց սպանուած թշնամիների գիտիներն ուտելու: Մեզ համար սորանից աւելի զգուելի բան չկայ, եւ ոչ մի բան մեր մարդկային զգացմունքները չխայթեր, որչափ մարդակերութիւնը, որին մեք սովորած ենք համարել իբրեւ ամենայեալին անկումն մարդկային բնութեան: Աղ. Ֆոն Հումբոլդթ թերեւս շատ թեթեւ կերպով անցաւ այս մասին, ասելով թէ, երբ մեք վայրենին կմեղադրենք մարդակերութեանը համար, կնմանենք Գանգէսի այն բրահմանին (քրմապետ), որ կամենար Եւրօպացիներին մեղադրել, որ մեք անասունի միս կուտենք: — Վասն զի մարդկային եւ անասնական մներով կերակրուելոն մէջ անհուն տարբերութիւն կայ: Բայց մարդակերութիւնը ամենայն ժամանակ բարոյքի նախնական կոշտութեան ապացոյց չէ կարելի

բերել տեղ տեղ այդ գարշելի սովորութիւնը յետոյ մտած է: Գովաշտէտէր կհաստատէ, թէ նոր Զելանդացիներն այս սովորութիւնն սկսեցին, երբ նոցա երկրում եղած մեծ թռչուններն ցեղերը ոչնչացան, Կուկի նոր Զելանդայ տարած խոզերի աճելով եւ քրիստոնէութեան տարածուելու շնորհքով այս զգուելի սովորութիւնն այնտեղ արմատախիլ եղաւ, ուր մարգակերութեան վերջին օրինակը տեսնուեցաւ 1843-ին: Սակայն 1863-ին Անգլիայում լուր ստացուեցաւ, թէ Ֆոլկնէր գոկտոր — քարոզիչը գաղաւթար սպանուած է մաորիսներէն, որ նորա փորոտիքը շների առջեւ նետեցին, արիւնը խմեցին, եւ սիրտը, լեարդն ու մարմնի միւս մասերը լափեցին: Այս միայն վայրենիներն են, որ իւրեանց կեանքի գոյութիւնը պահպանելու համար մարգակերութեան կղիմին, այլ եւ քաղաքակիրթ մարդերու, որի օրինակը կերելի սովի տարիները, բաղաճների պաշարման եւ նաւաբեկութեան ժամանակները: Իսկ մարգակերութիւնն, իբրեւ ճիշտ սպացոյց բարոյքի վայրենութեան, սովորութիւն էր Եւրոպացի գրեթէ բոլոր հին ժողովուրդներին, շատ ընդհանրացած էր նաեւ Ամերիկայում, ուր Ագակապաս ցեղն իւր այդ սովորութենէն այսպէս կոչուեցաւ: Աղ. Փոն Հումբոլդտ լսել է, որ Կասիկիարում մի Ալկատացի իւր կինը գիրացուց եւ յետոյ նորան կերաւ: Մարգակերութիւնը գեռ այժմ եւս սովորական է հարաւային ովկիանոսի բնակիչներին, Բրազիլայում, արեւմտեան Ափրիկէում եւ նոյն իսկ Հնդկաստանում: Մէտիւի խօսքով, Ֆիջի կղզիացիներն իւրեանց որդիներին կսովորեցնեն գերիներ սպանանել: Այս վայրենիները կհամարուին աւելի զարգացածներ, եւ միեւնոյն ժամանակ ամենէն աւելի արիւնաճարաւ կղզիացիներ: Երբ բնակարանի հիմն ձգելու կլինին իւրեանց ստրուկներին ողջ ողջ կթաղեն հողին մէջ. կալուածատէրերի թաղման ժամանակ, նոցա գերիներն էլ ամբողջ խումբերով կխողխողուն վերանին. երբ մարգամաղոյկները ջուրը կլջեցնեն, գերիները կծառայեն իբրեւ կենդանի գլաններ: Գեկրետեան գաւառում ստորին դասակարգը միայն նորա համար պահուած է՝ որ գործածուի զոհաբերութեան, կամ հասարակաց խնջոյքների միս մատակարարելու, որ հանգիստւոր օրերը տեղի կունենան: Այս եղիւլիներն այն աստիճան թշուառ կեանք կվարեն, որ

իւրեանց խողխողումը ոչ միայն հանդարտութեամբ կտանեն, այլեւ մի տեսակ բաւականութիւն կզգան: Տեղական բարբառին մէջ «գիտի», եւ «ուտելիք» նոյն բառով «բակոյայ» կասուի: Խորսյուած եւ համեմուած մարդկային մարմինը, կհամարուի ամենալաւ մէկ ընծայ, որ կարող է մէկն անել իւր բարեկամին: Այսպիսի գիտիը կտանեն պատգարակի վերայ, նստած գիրքով, ուշադրութեամբ ծալած անդամներով, երեսը կտրմիր ներկած, գլուխը փետուրներով զարգարած, եւ ձեռքում բռնած ձեռնափայտ կամ հովհար: Քանի մի տարի յառաջ հրատարակուած տեղեկութիւններին նայելով, Ուէսլենեան քարոզիչները տարիներով աշխարհիս այս ամենաբիւնարբու իզգեցիկների հետ բնակել են, առանց բնաւ նոցա կողմէն նեղութիւն կրելու: Նոքա իրենց ապահովութեան վերայ այն աստիճան վստահութիւն ունէին, որ երկու առնասիրտ կնիկներ — այն քարոզիչների արժանաւոր ընկերակիցները — տիկին Նեյտ եւ Վալ՝վերա լսելով թէ մերձակայ մի կզգի վերայ կպատարտուին սլատերազմի գերիներ մորթոտելու, եւ մարդակերութեան խնջոյք անելու՝ նաւակը նստեցան եւ միայն երկու հոգւով գնացին այն պղծութեան տեղն հասան: Նոքա բաւական ուշացել էին, վասն զի տասը զոհերն արդէն մարթուած էին եւ միայն երեքն էին մնացել: Անգղիոհէճներն աներկիւղաբար մօտեցան վայրենիներին եւ պահանջեցին՝ որ մնացած երեքին կեանք շնորհուի: Մարդակերների պետը հիացաւ մնաց այն կնիկների համարձակութիւնը տեսնելով եւ իսկոյն նոցա ինդիրը կատարեց. «թող լինի, բացագանչեց: Մեռածներն արդէն մեռան, կենդանիներն էլ թող կենդանի մնան»:

Զեման կպատմէ (1861 ին) թէ Սեմոսոմայի մէջ, որ Ֆիջի կզգիների ամենախառաղի տեղն է, երեք տարի է արդէն, որ մարդակերութիւնը ոչնչացած է, եւ նոցա թագուհին շատ բարեպաշտ քրիստոնեայ մի է: Նոցա Բաու գլխաւոր քաղաքում եւս 1854 թուէն սկսած մարդակերութիւնը դադարած է Ուէսլենեան քարոզիչների ջանքով: Զեման յաջողեցաւ տեսնել այն չուգունեայ մեծամեծ պղինձները, ուր կեփուէին մարդկային զոհերը: Սակայն էգերշտրոմի պատմութենէն, որ շատ տարիներ անցուցել է Ֆիջի կզգիին վերայ, յայտնի կերելի քաղաքակրթութեան ունեցած յաջողութիւնների խախուռ լինե-

լր էրք այն քարոզիչներն անկէ հեռացան եւ 300,000 ընկնէր իրենք իրենց գլխին թողին: Արճի եւ բամբակի բոյսերն անմշակ ձգուած էին՝ աշխատաւորի պակասութենէն: Լեռնային ցեղերը պատերազմ կմղէին եղբրականներին հետ: Պերի ընկածները մաս մաս կը կտրատէին: Վաւարաններում կխորովէին եւ կուտէին: Այս պղծութիւնների համբաւը զօր ու գիշեր անհանգիստ կանէին էգերշտումին: Գաղղիացիներն՝ որ 1853 թուէն ի վեր Նոր Կայեղոնեայ կտիրեն՝ դեռ եւս չեն յաջողել այն տեղին մարդակերութիւնը բնաջինջ անել բոլորովին: եւ ստիպուել են մահ նշանակել նոցա համար, որ այս գործի մէջ կրօնուի: Այս բարբարոսական սովորութիւնն արմատախիլ անելու ամենալաւ հնարն է անասնական կերակուրը (մորթելու անասուններ) այն տեղերում տարածել, որին օրինակ ունենք Նոր Զելանդեան եւ Բոտսուալի ցեղը: Հարաւային ովկիանոսի գլխաւոր պետերէն մէկը՝ Անգլիացի նաւավարին, որ նորան կգլուրովէր այն անգութ սովորութեան համար՝ պատասխանեց. « Դուք այդպէս գիւրին խօսել գիտէք միայն. դուք առատ եղեր ունիք, իսկ մեք մարդէն ի զատ ուրիշ եղ չունինք »: Այսպիսի երկիրների համար խողը յիշաւ կրթական կենդանի դարձաւ, իւր սմին տեղ գիւրաւ բաղմանալու պատճառով. բայց այս գաղանական սովորութիւնների վերայ, որ մեզ կքսամընեցնեն, ուրիշ աչքով կնային այն ցեղերը, որոց մէջ տարածուած է այն, ինչպէս կերելի Արգի այս պատմութենէն թէ արեւմտեան — Ափրիկեցի մի սեւամորթ իւր հայրենիքէն հեռու մահամերձ լինելն զգալով՝ դառնապէս կուլար ասելով թէ, ինքը փոխանակ իւր աղգականներին եւ բարեկամներին կերակուր լինելու, մըջիւններին կուր պիտի դառնայ: Ասկայն վայրենիները միանգամ որ մարդակերութենէ դադարեն, իրենք եւս այս սովորութենէն կգարշեն եւ, ըստ մեծի մասին, կուրանան թէ իւրեանց նախնիներն այնպէս վարուել են: Միջին Ափրիկէի սեւամորթ ցեղերը կհաւատացնեն թէ՛ իրենց վերայ ելած մարդակերութեան համբաւը, գերեվաճառներէն հնարուած սուտ է միայն: Իսկ Մաջիարը կհաստատէ թէ՛ Բիգէի սեւամորթներն իւրեանց գերիներին կուտեն, նայնը կասէ նաեւ Դիւ — Շալիւ, Ֆանցեղի վերայ, որ Գաբոյոնէն արեւելք կընկնի: Ֆորսաէր, որ Նոր Զելանդիայում կատարուած մարդակերութեան ականատես

եղած էր՝ կոչումէ թէ՛ « Բնկերութեան » Կղզեցի միերիտասարգ իւր զգուանքն արտայայտեց այս սովորութեան դէմ, որ արգէն սննչացել էր իւր հայրենիքում, վասն զի նա որպէս զի այդպիսի եղեռնաւոր տեսարանը չգիտէ, ժախաւ, հեռացաւ, եւ արտասուեցով իւր սիրտն իջեցուց: Բայց այս արիւնախանձ սովորութիւնը ամեն տեղ յաճախած չէ, շատ տեղ սա մնացած է ամենահին ժամանակներէ, եւ իբր սրբազան արարողութիւն կոչուաւ: Այս վերջին եղանակին թերեւս ամենազգուելի օրինակը կներկայացնէ Սուլայման Կղզեցի Բատոռոս ցեղի ունեցած մի տօնը: Գերեալները կամ յանցաւորները կբառապարտուին կենդանւոյն ուտուելու, որի վերջին օրինակը դեռ 1847-ին պատահեցաւ, ինչպէս Իւնգիսուն կոչումէ: Զոհը սիւնի վերայ կը կապեն, որեւ է ցեղապետ գանակը կհանէ եւ թշուառականի մարմինէն մի պատառ կը կտրէ, ցնծութեամբ վեր կբարձրացընէ, եւ ազահոթեմէն ցոլացած աչքերով կծծէ, յետոյ կրակի վերայ փոքր ինչ կխորովէ եւ կլափէ: Այս ժամանակ ներկայ գտնուած բոլոր բազմութիւնը արիւնալից զոհի վերայ կը յարձակեն, միտը կը կտրատեն, կրակին վերայ կխորովեն եւ աղ ու պղպեղով կուտեն՝ ամենեւին չզգածուելով չարչարուողի դառնակսիւի լաց ու կոծից, որով հոգին կփչէ սոսկալի տանջանքներին մէջ: Կմախքը յետոյ կհաւաքեն: Բատոռոսները ոչ թէ Մալայեան, այլ Հնդկա — Եւրոպական ծագումն ունին, եւ նոցա բուն կրօնն աւելի հին կհամարուի քան Բրահմայեան եւ Բուդդայեան կրօնները: Էպպ կիլիայէ թէ նոքա ամրակազմ են, պատերազմասէր, եւ արուեստների մէջ զարգացած, կարող են մեծազորներ հալել, երկաթ եւ պղինձ գործածել, եւ բամբակ — եղէգի վերայ զրել: Հեղինակը կյուսայ թէ՛ նոցա արիւնախանձ սովորութիւնները մերձաւոր ապագայում բնաջինջ կլինին:

Մարդակերութեան հետ կառակցութիւն ունի, եւ շատ հաւանականաբար ի սկզբան նոյն աղբիւրէն ծագումն առած է՝ եւ տուածներին մարդազոհ մատուցանելը, — սովորութիւն մի, որ վայրենիներն ունին եւ որի հետքը կերեւել գրեթէ ամեն հին ժողովուրդների մէջ: Կեսար կիլիայէ թէ՛ Բրիտոնները մարդազոհներ կանէին: Նաեւ Գերմանական ցեղերը դեռ Բ. դարում իւրեանց գերիները կմորթուէին ի պատիւ Յդինի: Շուէտի մէջ վիճակով կվճռուէր թէ՛ մի պիտի զոհ լինի աստուածներ-

րին, եւ այսպիսի զոհ լինել կրիճակուէր երբեմն մինչեւ իսկ
 թագաւորներին: Իբն—Ֆոսգլան արաբացի ճանապարհորդը ա-
 կանատես եղած է: որ Վոլգայի վերայ 922-ի ռուսները մի օրի-
 սրդ զոհեցին՝ երեւելի մէկ անձի թաղման ժամանակ: Նա ման-
 րամասնաբար կրնկարագրէ այն հանգէտը, որ շատ ցաւալի ե-
 ղանակով կատարուել է: Արաբացի ուրիշ մի ճանապարհորդ
 կոչւումէ, թէ հեթանոս—Սլաւեանները սովորութիւն ունէին,
 որ երբ իշխաննին կմեռնէր, նորա գլխակին հետ կոյրէին նորա
 ծառաներն, ազախիւնները, կնիկները եւ բոլոր մերձաւոր մար-
 դիքը—գրագիրը, զբօսակիցն եւ բժիշկը: Մեքսիկայում երբ
 1486-ին մեծ աղօթատունը պէտք է նուիրագործուէր, 72,000
 մարդազոհ մատուցուեցաւ: Մարդիք սպաննելը դեռ այժմ եւս
 շատ սովորական են Դագոմէյի թագաւորի պալատում, ուր, ինչ-
 պէս կերեւի, այս սովորութիւնն, որ մինչեւ ցայժմ արմատա-
 իրիչ չեղաւ, չնայելով Անգլիացիների բուռն ստիպման, ժողո-
 վուրդը զուարճացնելու կծառայէ: Ժիրոյ, որ 1836-ին Դագոմէի
 թագաւորին մօտ գտնուեցաւ մի տօնի ժամանակ, կասէ թէ՝
 տօնի համար 500—600 մարդ խողիսողուեցան, սոցանէ մի քա-
 նին գլխատեցին, միւսները բարձր պատերի վերայէն սուրիների
 վերայ ձգեցին,—եւ այս ամենը միայն զուարճութեան համար:
 • Արեւմտեան—Ափրիկէի Համբաւաբերը, կասէ թէ՝ 1861-ին՝ մեծ
 զոհաբերութեան մի օր, որ թագաւորը պատրաստել տուած
 էր ի պատիւ իւր հօր ստուերի՝ 2,000 հոգի սպանուեցան,
 ուրիշներն այս թիւը մինչեւ 7,000-ի կհասնեն: Եյշարտ, Հոլլան-
 դացի մի վաճառական, որ Պոպոյի մէջ պաշտօնով կեցած էր
 ընդարձակ կնկարագրէ իւր Դագոմէյում անցուցած ժամանա-
 կը: Ինքը թագաւորի մօտ տեսութեան ընդունուեցաւ Յուլի-
 սի 1-ին. թագաւորը իւր պալատին առջեւ սրահակի վերայ
 բազմած էր, շրջապատուած ամազոնուհիներով. նա Եյշարտին
 ձեռք տալով՝ Ներոպական ձեռով բարեւեց եւ սկսաւ հետը խօ-
 սակցել Պորտուգալացի լեզուով: Յետոյ Եյշարտին հասկացու-
 ցին՝ որ տուն երթայ եւ երեք օր ամենեւին դուրս չելնէ: Յուլի-
 սի 5-ին նորան կրկին բերին մեծ հրապարակն, ուր այն գիշերը
 բազմաթիւ մարդիք սպաննած էին: Եյշարտի տեսած առաջին
 զոհը Աւիլեամ—Դոգերդի կոչուած Սիէրրայ—Լէոնդացի քա-
 րոյզի գիական էր, նա խաչուած էր, նոյնպէս բեւեռուած էին

ձեռքերն ու ստերը: Չախակոզմեան միանունքին մէջ խրեցուցած էր իւր մեծ հոխանոցը: Թագաւորը նորէն սրահակում նստած եւ պատերազմական ճառեր կ'իօօսէր, առջեւը լցուած էին նորոգ կորուսած բազմաթիւ գլուխներ, մմբողջ հրապարակն արիւնով ներկուած էր: Ելշարտ նորէն իւր առնը տարուցաւ՝ այսպիսի պատուէր ընդունելով՝ որ մինչեւ արեւի մոնելը ոչ դուրս ելնէ եւ ոչ մտնոցը նայի: Ամսի 10-ին նորան կրկին Թագաւորի մօտ տարան վաճառանոցի հրապարակը: Այս անգամ նորա տէքի առաջեւ Իշագացի ցեղէ երեք պետեր գլխատեցին: Յետոյ 24 կողով բերին, որոց ամեն մէկում մի մի գերի դրուած էր այն կերպով՝ որ միայն գլուխնին դուրսը կերելնային: Կողովները Թագաւորի առջեւ շարեցին եւ յետոյ նետեցին պարսոյ եւ աղաղակող ամբոխի առջեւ, որ խփոյն այն թշուառներին գլխատեցին: Այլ որ կարողանար կողովը ձեռք բերել եւ մի գլուխ կտրել՝ 20 դրամ ընծայ կառնէր, 11-ին էլ նոյն տեսարանը շարունակուեցաւ: Յետոյ 10 օրի չափ խաղաղութիւնը տիրեց, բայց, ինչպէս կերելի, մարգասպանութիւն գիշերները կ'ընէր: Ամենէն մեծ մահը տեղի ունեցաւ Յուլիսի 22-ին: Պալատին հանդէպ երկու բարձր տախտակամած շինուած էին, որոց վերայ 16 ահան զօհելի մարդ եւ 4 ահան ձի կաշին: Մի երրորդ տախտակամածի վերայ՝ որ պալատի մէջ էր՝ դրուած էին 16 կին, 4 ձի եւ մի կոկորդիլոս: Սոքա ամենը Իշագի մէջ գերի բռնուած Սիէրրայ—Լէոնացի էին: Ուրիշ 16 հոգի էլ՝ Եւրոպական զգեստով կապուած, նստած էին սեղանի շուրջը: Սոքա պիտի խմէին Թագաւորի կենացը, որ հանդէս կանէր իւր զօրքերին, բաղկացած 40.000 զինուորէ, 10.000 ամազոնուհիներէ, 24 թնգանօթներով: Այս առիթով նա իւր զօրքերին խոստացաւ, որ նոցա կտանին նոր պատերազմների, Վերջապէս բոլոր գերիներն ու կենդանիներն սպանուեցան, որի ատեն ուշադրութիւն կանէին՝ որ սպանուածների արիւններն իրարու խառնուին:

Ննջեցեալների յիշատակի համար մարդագոհ մատուցանելը հին եւրոպայի մէջ ընդհանրացած սովորութիւն էր, որ դարեր անցնելով՝ հետզհետէ վերջացաւ: Նախնի Ժամանակները գալլիսի մէջ (գաղղիոյ) ծառաներն իւրեանց տէրերին հետեւելով՝ խորոյկի մէջ կ'մտնէին եւ կայրուէին, բայց այս սովոր-

բութիւնը Յուլիոս Կեսարի ժամանակ արդէն վերցուած էր։ Էդգայի*) մէջ կալատմուի թէ՛ Սիգուրդի եւ Բրոնգիլդի համար պատրաստուած խարոյկին վերայ այրուեցան նոցա ծառանները, աղախինները, շներն ու բազէները։ Վոնիփակիոս (745 թ.) կասէ թէ Վենգերի մէջ այն կինը յարգելի էր, որ իւր ամուսինի մահէն ետքն ինքզինքը կսպաննէր՝ որպէս զինորա հետ այրուի։ Ժ. դարում իսկ Լեհացիները մի այրիի գլուխը կտրեցին եւ ամուսինին հետ խարոյկ հանեցին։ Գուանինի, որ երկար ժամանակ Սարմատացիների հետ բնակած է՝ կասէ թէ Ժ. դարի սկիզբը Կուրիանդեայի մի քանի տեղերում երեւելի անձերի հետ կլծաղէին նոցա թանկագին գոյքը, ձիերը, զէնքերը, որսական երկու շուն, մի բաղէ եւ նոցա հաւատարիմ կամ ամենասիրելի մի ծառան, եւ այս վերջինիս իբրեւ վարձատրութիւն նորա բարեկամներին եւ ազգականներին առատ ընծաներ կտրուէին։

Հնդկաստանի մէջ այրիներն այրելու սովորութիւնը, որ Ստրաբոնի**) խօսքով՝ սկսուած է, որպէս զի կնիկների իւրեանց հասակաւոր ամուսինները թունաւորելու առաջն առնուի՝ նոյնպէս հինաւուրց է։ Անգղիացիների անխոնջ ջանքով, որ Լորդ բենգիլիէն սկիզբն առաւ եւ շնորհիւ լուսաւորեալ հնդկացիների, որոցմէ մէկը՝ Բորու - Մոհ - Լոլ - Սիլ 20,000 բուբլի խոստացաւ այն մարդին, որ առաջին օրինակը ցոյց կտայ այրիի հետ ամուս-

(*) Էդգայ կոչուին Սկանտինաւիան վիպասանութեան երկու ժողովածուները, ոտանաւոր եւ արձակ, որ գրուած են ԺԱ. և ԺԲ. դարերում։

(**) Ստրաբոն երեւելի Յոյն աշխարհագիրը ծնաւ Կապադովկիայի Ամասիոյ քաղաքում 50 թ. ն. Ք. Մանկութեան ժամանակ կատարեալ ուսումն աւարտելէն ետքը փոքր Ասիայ, Ասորիք, Եգիպտոս, Յունաստան եւ Իտալիայ ճանապարհորդեց, նորա զխաւոր երկասիրութիւնը «Աշխարհագրութիւնն» է որ 17 դրքի բաժնուած է։ Թէպէտեւ այս գրուածքի մէջ աշխարհագրական եւ պատմական սխալներ չեն պակասիր — որ աւելի ժամանակին քան թէ իւր թերութենէն է — բայց սա առաջին տեղը կրօնէ հին աշխարհագրութիւնների մէջ որոնք մեր ձեռքը հասած են։ Մէջը զտեղուած են հետաքրքրական տեղեկութիւններ ոչ միայն աշխարհների վերայ, այլեւ նոցա բնակիչների կրօնի բարոյքի եւն. մասին։ Մեր քերթողահայրն էլ (Խորենացին) սորա աշխարհագրութենէն օգուտ է քաղել իւր աշխարհագրութեան համար։

համալուր,— այս սոսկալի սովորութիւնն Հնդկաստանէն վերցուեցաւ։ 1850 թ. ապրիլի 20ին՝ Ասիական ընկերութեան ունեցած հասփին մէջ Աւիլսոն մարդկային զոհաբերութեան վերայ խօսելով՝ բնութենեց, որ այս սովորութիւնը Բրահմայեան վարդապետութեան կաղմակերպուած միջոցին Հնդկաստանի հին կրօնի մասն էր. եւ թէ եւ Վիդայի*) մէջ կայ գրուած, բայց աւելի հին է քան Ռամայեանն եւ Մահաբարատան**) եւ թերեւս ծագում առած լինի 500 թ. ն. Ք։ Սիկ ցեղի պետերը 1853ին ձայնակից էին, որ այն սովորութիւնը վերնայ։ Այս կերպով վերջին զոհն եղաւ 1850ին մի գերմանացի ճանապարհորդի ներկայութեամբ Զոնդեան քալի կղզիի մէջ։ Երբ Հոնգ-Հոնգի պետը եւ քրմապետ Գիւլի - Արգոն պիտի այրէին, նորա եօթն կնիկները, գլուխներին վերայ մի մի ազաւնի բռնած խարոյկի մէջ նետուեցան։ Երբ թռչուններն կրակէն ազատուելով թռչեն՝ Մալայեցիներն համար այս նշան է թէ՛ հոգին կհամբառնայ։ Հնդկներն այժմ՝ չունին իրենք իրենց զոհելու սովորութիւնը, բայց Պետրոս Մարտիրոս, Կլաւօքերոյ եւ Հերրերայ հին մատենագիրները կաւանգեն թէ՛ երբ նոցապետը կվախճանէր՝ շատերն իրենք իրենց կսպաննէին՝ որ հետը լինին եւ նորան ծառայեն։ Այս ծիսի

(*) Վիդայ կկոչուին Հնդկաստանցիների սուրբ դրքերը, որ գրուած են նոցա հին և նուիրական սանսկրիտ լեզուով. սորա 4 են թուով. — 1) Ռիգ, որ կպարունակէ դասնաւոր գրուած աղօթքներ և օրհներգներ. 2) Յաւր, ուր գրուած են արձակ գրուած աղօթքները. 3) Սափ, երգիկ աղօթքներ և 4) Աթուրվա, օծման, օրհնութեան և անէծքի ձևեր։ Վիդայի վերայ շատ մեկնութիւններ գրուած են, որոնցմէ ոմանք ևս նուիրական դարձած են հնդկաստանցիներին։ Վիդայի վարդապետութենէն բոլորած է մի ուղղութիւն փիլիսոփայութիւն, որ վէդանայ կկոչուի։ Կերևի թէ Վիդան, մանաւանդ առաջի երեք գրքերը Բրահմայէն շատ յառաջ են. հընդկաստանի մէջ աւանդութիւն կայ թէ՛ նոքա գրուած են Վիադայի ձեռքով ժէ. դարում ն. Ք.։

(**) Մահաբարատայ և Ռամայեանայ հնդկաստանի հին վիպասանութիւններ են։ Առաջինը գրուած է Վիադայի ձեռքով 18 դրքի է բաժանուած և 200,000 տուն կրօմանդակէ։ Մէջը կպատմուին Կորաւի Պանդուսի և այլ զինացազունների քաջութիւնները։ Երկրորդը միտյն բամայ զինացազունի արկածները պատմուած են. սորա հեղինակն է Վալմիկիւ։ Երկուքն էլ մաս առ մաս և ամբողջապէս էլ թարգմանուած են եւրոպական լեզուներով։

հետքը դեռ կերեւի այժմ՝ արեւմ. Ամերիկայի Վանգուզերայ կղզիների մէջ: Երբ պետի դին այրելու կլինին՝ նորա կնիկները խորոյկի վերայ պէտքէ ընկած մնան մինչեւ որ քուրմը նոցա թոյլ տայ վայր իջնել անտի: Յետոյ այն կնիկները պարտաւոր են այրուածի սակարները մոխիրէն զտաւելով՝ իւրեանց կռնակի վերայ կապած երեք տարի զօր ու գիշեր վրանին կրել, եւ երբ այս ժամանակամիջոցն անցնի՝ ապա թէ իրաւունք կունենան նորէն ամուսնանալու: Ֆիջի եւ նոր-Հեբրիդեան կղզիների մէջ այրիներին կխեղդեն: Բառ կղզիի պետերն իւրեանց հակառակորդին սպաննեցին եւ իրենց վրէժը կատարեալ անելու համար նորա այրին կենդանի թողին, բայց հաւատարիմ՝ կինը չէր ուղեր կենդանի մնալ. «չուտով ինձ էլ խեղդեցէք, որ կարողանամ նորան միանալ, մխիթարել եւ կերակուր տալ»:

Լեռնային Փուադէմալայում, ինչպէս եւ Հնդկաստանում, Կոնգ կոչուած նախնական ցեղը սովորութիւն ունէր մանուկները զոհ անելու, որ մինչեւ վերջի տարիներս կշարունակուէր, 1835-ին Կէմպրէլ նաւաւարը հարիւրէն աւելի այսպիսի Ֆէլէէ ազատեց: (Մէրի կիոյսին այն մարդերը, որ կզոհուին, որպէս զի երկրի առտուածուհին քաղցրանայ եւ լաւ հունձ պարգեւէ իրենց): Նա ուրիշ ցեղերի մէջ եւս այս սովորութիւնը խափանեց: Զոհաբերութեան կմասնունին աւելի աղջիկներն, որոց, մասնաւորապէս, ջնջել կջանան Սելրոգի եւ Ռաջպուտանի բնակիչները, որ նոցա կամ ուղղակի կխեղդեն եւ կամ վայրի գաղանների առաջ կձգեն: Ուէլէսլէյ Լորդն առաջին անգամ այս սովորութիւնն արգելեց, եւ անգլիական կառավարութիւնն այժմ խստիւ կհսկէ, որ այս մասին հրատարակուած օրէնքները ճիշտ պահուին, սակայն օրինազանցութիւններ պակաս չեն մեր օրերն եւս: Մակ — Նէյլ՝ նաւաւարը կիմացնէ, թէ Զայապուրջի կոնգերը քանի մի տարի յառաջ դժգոհ էին մարդագոհի վերնալու համար. վասն զի տարիի վերջի երեք անձրեւաբեր եղանակներն երաշտ անցան եւ ընտանի անասունները կերակուրի պակասութենէ կնեղուէին, ուստի դիմեցին Տուամուլի պետին եւ Ֆէլէ խնդրեցին նորանից, բայց սա նոցա խնդիրը չընդունելով՝ մարդի տեղ գոմէշ եւ ոչխար տուեց: Նոքա արհամարհանքով մերժեցին այս ընծան եւ վճռեցին՝ որեւէ կերպով հասարակաց զոհ մատուցանել մերձակայ լուսինի — լուման:

Մի կոնդայս նստատակի համար առաջարկեց իւր դաշտի ստորկուհին, որ հինգ բուբլիի գնել էր. նորան կապեցին եւ գիւղը տարան. եւ երբ պետք փորձ արաւ նորան ազատելու՝ նորան լեռների մէջ տարան պահեցին: Պետք այն ժամանակ գիտամամբ այս եղելութիւնն յայտնեց անգղիական կառավարութեան, որ լուրն առնելէն մի ժամ ետքը յիսուսն հոգիէ կազմուած զօրութեամբ մի՝ յուսաարող հրամանատարի իշխանութեամբ յուղարկեց, որոնք 38 ժամի մէջ 50 անգղիական մղոն ճանապարհ կըտրելով լեռնային ամենագոթուարին տեղերէ՝ վերջապէս հասան զոհաբերութեան տեղը—Տուամիւլի սարահարթը, որ ծովի մակերեւոյթէն 4000 ոտն՝ բարձրութիւն ունի: Զոհելի կինը դեռ նոր մօտեցուած էր սիւնին: Կոնդերը, որ 5000-ի չափ էին, դէնքի գիմեցին, բայց Անգղիացիք պատերազմելով՝ կինն ազատեցին: Մակ—Նէյլ՝ անգղիական կառավարութեան խորհուրդ կուտայ, որ այն գղիւրին՝ որի գիւղի մէջ աբուի եւ իգի կանոնաւոր համեմատութիւնն ելնէ՝ որ եւ է նշան մի տայ՝ իբրեւ արտայայտութիւն իւր գոհունակութեան: 1860-ին 30 մարդիք ազատուեցան, որոնք Որիսայ լեռնային տեղում արդէն վիճակուած էին զոհ լինելու: Կէմբըլիի հաշուով 1837 էն մինչեւ 1854 ը Կոնդերի տշխարհում 1506 էն ոչ պակաս Բէլէ ազատուեցան, իսկ տարեկան մարդազոհերի թիւը 150-ի կհասնէր: 1837 ին երբ պետերն երդում արին՝ որ այն սովորութիւնը վերցնեն՝ Կուսմուրի մէջ 100 Բէլէ ազատութիւն ստացան: Կէմբըլէ կասէ թէ՝ մարդազոհի վիճակուած տղաները մի գիւղէ միւս մերձաւոր գիւղին կծախուին: Մահացնելէն յառաջ զոհին այնչափ արմաւենիի գինի կխմցնեն, որ նա բոլորովին արբենայ, յետոյ խոզի արիւնի մէջ կամ ծառի երկու ճիւղերի մէջ սեղմելով կխեղդեն: Սորանով կը տեսնուի թէ՝ այստեղ այլեւս սկսել են հոգ տանիլ, որ զոհի տանջանքները թեթեւացնեն: Սպանելէն ետքն ամեն մէկը նորա դեռ դողդոջուն գիակէն մի մի կտոր կվերցնեն եւ կտանեն իւրեանց արտերում կթաղեն: Արդեօք մարդկութիւնն ի հնուց այս անյուժանելի զգացումն ունեցել է թէ՝ իրեն փրկելու համար պետք է իւր նմաններէն զոհ մատուցանէ, այնպէս որ առանց այս զոհին որ եւ իցէ փրկանք անօգուտ է, թէ բնութեան օրէնքների մասին քիչ տեղեկութիւն ունենալով՝ ժանտախտ, մահ, եւ որ եւէ

չարիք՝ անպատճառ վրէժխնդիր մէկ աստուածի պատուհասը կհամարի՝ որ կփութայ ինքն իւր վերայ այս դատակնիքը դնել, իւր համար ամենէն թանկագին, մերձաւոր եւ բարգաւաճ առարկան զոհ մատուցանելով՝ որպէս զի սրամտած բարձրագոյն էակի գուլթը շարժէ։ Եւրոպացիներին այժմ՝ աշխարհի ամեն կողմը տարածած լուսաւորութեան ժամանակ ուրիշ տեսութիւն կըդիսէ եւ աւելի արժանաւոր աստուածալաշտութիւն։ Արդէն 25 տարի է որ՝ Զագգերնաուտի կառքի անիւները չեն գլորիր մարդկային կամաւոր զոհերի վերայ, որ նոյա տակ կնեւոուն ջախջախելու համար, խիստ բազմաթիւ օրինակներէ կտեսնենք, որ այս սոսկալի սովորութիւններն հետ զհետէ ջնջուելու վերայ են։ Սպիկ—Նեղոսի ակունքը գտնողը, գիտեց որ՝ սեւամորթների մի ցեղ, որ պատերազմէն յառաջ տղայ մի զոհ արաւ՝ երբեմն գոհ կլինէր մի այծով եւս։ Չլիշեցնէր արգեօք այս՝ Իփիգենեայի*) զոհերը Աւլեգումը (Օղիգոս), ուր Արտեմիս աստուածուհին՝ որին այն զոհը պիտի անէին՝ օրիորդը փրկեց, տեղը եգնիկ մի իջեցնելով **):

(*) Իփիգենիայ (Հոմերոսի Եղիականին մէջ) Ագամեմնոնի դուստրն էր։ Յոյների բանակը Տրոյադայի անջև երկար ժամանակ անյաջողութեան մէջ էր։ Քուրմն յայտնեց թէ Արտեմիս Ագամեմնոնի վերայ բարկացել է։ Ուստի մինչև որ թագաւորական զարմէ մի աղջիկ իրեն զոհ չմատուցանեն՝ չհաշտուիր։ Ագամեմնոն շատ դժուարութեամբ հաճեցաւ վերջապէս իւր դուստրն Իփիգենիայ զոհել։ Բայց Արտեմիս վերան գլխով եղնիկ մի իջեցուց որ իրեն զոհեն, և Իփիգենեան ազատեց և իրեն քրմուհի ընտրեց։

(**) Նոյն պատմութիւնը կկարդանք նաև Հին Վտակարանի մէջ։ Աստուծոյ հրամանով Աբրահամ իւր Իսահակ որդին լիւր կտանի, և երբ սուրը հանած սպաննել կուզէ՝ հրեշտակը չթողնելու, և խոյ մի կցուցնէ, որ նա Իսահակին տեղ զոհէ։ Սոյն մտքով կհասկանանք նաև Մովսէսի օրինաց զբքի մէջ պատուիրածը թէ «ամենայն արու» որ բանայ զարդանդ մօր՝ սուրը Տեառն կռիցի»։ Ուստի նորան փրկանաւորելու համար (մեր կարծիքով՝ փոխանակ նորան զոհ անելու Աստուծոյ) մի գառն կամ՝ զոյգ մի տատրակ պիտի պատարագէին ծնողք։ Մարգարոհի կամ իբրև մարդին փրկանք՝ կենդանադոհի սովորութիւնը հին ազգերին մէջ շատ յաճախած էր։ Փրկնիկեցիներն իւրեանց Մեկբարդի հրաշէկ թեւերին վերայ կողջակիլէին իւրեանց զաւակները, Իդոմենէս՝ Արեաէի թագաւորը՝ Տրոյիայի կործանումէն զարձած տեսն՝ երբ ալէկոծութեան բռնուեցաւ՝ Պիսիդոնին խոստացաւ զոհ անել իւր առջևն առաջին անգամ՝ եղնողը՝ եթէ այն վը-

Մեր հոգին, որ վայրենիների այսպիսի արխնուռչտ ոտորութիւնների շարունակ պատմութեամբ տաղտկացեալ է՝ հանգիստ պիտի առնէ՝ անապատների նոյն խեղճ որդիների բարեգործութեան նկարագիրներով։ Վայրենին իւր բարբարոսական բնաւորութեան հետ այնպիսի գիւցաղնական արիութիւն եւ եռանդ, հաւատարմութիւն եւ անձնանուիրութիւն, սէր եւ բարեկամութիւն կցուցնէ, որ մեզ կմոռացնեն նորա պակասութիւնները։ Հնդիկի բարբը, կասէ Շէհաու ուսումնասիրելու է նորա ձմերանոցում, ուր տեղ նա կփոխուի բոլորովին. քաղցրաբարոյ, հիւրասէր եւ ուրախ է նա. այնտեղ ապահով է նա, որ իրեն համար անգտանելի երջանկութիւն է այնտեղ, քան որ եւ իցէ ուրիշ վիճակում։ Երտառու յսովորութիւն չէ՞ արգեօք, որ հնդիկները չեն ուզեր հեռանալ այն տեղէն՝ ուր իւրեանց մերձաւոր մէկը թաղուած է։ Երբ Վանիւս վերայ կղզիին մէջ ծաղիկ հիւանդութիւնը մեծ կոտորած կանէր՝ անգղիացի սպաները մի գիւղ գտան, ուր պահուել էին դեռ կենդանի մնացած բնակիչները, ամեն մի խրճիթի մէջ գետնի տակ թաղուած կային այրի կնոջ, տղայի գիակներ 4—5 հատ, Վարակոզ ախանայս բնակութիւնները սաստիկ պիտի աւերէր, եթէ նոցա բոլորովին չայրէին եւ տեղը կիր չլցնէին։ Հասկանալի է այժմ թէ՛ ինչպէս կլինէր, որ կաշեգործների ներմուծած ծաղիկ հիւանդութենէն Մանգանները՝ Միսսուրքի եղերքում՝ բոլորովին կփճանային։ Նոյնպէս անձնանուիրութեան օրինակ չէ՞ Ջիպիվէսի ծերունի պեար, որ ինքնիրեն կառաջարկէր որդիին փոխանակ (որին հնդիկ լիս ցեղը յաւիշտակել էր)։ ասելով, «որդիս դեռ քիչ ձմեռներ տեսել է. նորա ոտքերը դեռ պատերազմի շաւիղը կոխած չեն, իսկ իմ մազերս ճերմկել են եւ շատ անգամ ձեր ռազմիկների կմախքներով իմ հայրենական դամբարանները զարգարել եմ, ինձ ուրեմն խորոյկի վերայ հանեցէք եւ որդիս ազատ թողէք խրճիթ երթայ»։ Եւ թողեց որ՝ իրեն կենդանւոյն այրեն, առանց բնաւ հառաչանք մի հանելու։ Չսկոյ ցեղէն մի մարդասպան մահի գատապարտուել էր, եղբայրը տեսնելով որ՝ նա կգողայ՝ ասաց. «դու

տանգէն ազատուի, երբ դէ՞մն իւր հարազատ դուստրն ելաւ՝ և նա խելացնորեցտ խոստացածը խորհելով՝ իշխանները խորհուրդ կուտային իւր դուստրը կենդանիներով փրկանաւորել և ըն,

մահէն կլախնաս. ընտանիքիս վերայ հոգ տար. ես կմեռնիմ քո փոխարէն : Նորան նոյն վայրկեանին կտրատեցին :

Շատ բան կան, որ մեք թէպէտեւ իբրեւ բարբարոսութիւն կդիտենք՝ բայց վայրենիներին համար անհրաժեշտ պէտք են : Օրինակ, Աւստրալիացիներն իւրեանց ծծկեր որդիները մեռած մայրերին հետ կթաղեն, բայց այս այն պատճառով է, որ հնար չունին նոցա կեանքը պահպանելու : Հնդիկ խեղճ ցեղերը երբ թափառելու պիտի ելնեն՝ իւրեանց տկար ծերերը քաղցածութեամբ մեռնելու կգատեն, եւ այս բանս կպահանջեն նոյն իսկ ծերերը, որ իւրեանց ազգականներին եւ մերձաւորներին հրաժեշտի ողջոյն կուտան սրտաճմլիկ ոճերով եւ ձեւերով : Հիւսիսային Գերմանիայում, այն տեղերն, ուր Վենգերը կբնակէին, մանր անտառներ կան, որոնք «Արտասուաց» անունը կկրեն, աւանդութիւն կայ, թէ այդ տեղերում որդիներն կսպանէին եւ կթաղէին իւրեանց ծնողներին, որոնք այլ եւս ծերութենէ չէին կարող աշխատիլ : Պրոկոպիոս կասէ թէ՝ հերուները ծերերին կայրէին, եւ նոցա կնիկները պէտքէ իսկոյն անյայտանային, ապա թէ ոչ՝ նախատանք կենթարկուէին : Տիւրինգիացիներն իւրեանց հիւանդները կգլխատէին, եւ յետոյ կայրէին : Հոլլ Ամերիկացին այսպիսի սովորութեան հետքը գտաւ նաեւ Գրենլանդիայում 1860 ին : Նորա աչքի առջեւ էսկիմոսները մի մահացու հիւանդ կին սառույցէ խրճիթի մէջ գրին, եւ մորթերով պատեցին, մի քիչ կերակուր թողին եւ յետոյ գուռը սառույցով գոցեցին, որպէս զի թշուառու հին առանձնութեան մէջ հոգին փչէ : Հոլլ խրճիթը բացեց եւ հիւանդի մօտ կեցաւ մինչեւ նորա մեռնելը :

Գ. Ճէժ Ա. Լապլանի պատմութիւն .

Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ .

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ.

(Շտրասն-է-Լէ-Ն, Արտադ 1881 Սեպտեմբր) :

Բժիշկ Պատերի Ժանտախտային պատուաստի նորագոյն փորձերի հետեւանքը եւ նրանց նշանակութիւնը սիրիական աստի վերաբերումիւ (сибирская язва) :

Այս տարուայ անցեալ Սեպտեմբեր ամսում մենք ծանօթացրինք Արարատ ամսագրի ընթերցողներին Տուլուզայի ուսուցչա-